որ իջևանեսցի բանակս մեր ջուր ըմպելոյ 'ի աղբերաց և կամ 'ի ջրհորս ջրոց, նախ փորձեսցի ջուրն տալով ըմպել շանց և իշոց, եթէ գոցի մաքուր ապա իջցէ բանակն 'ի վերայ ջրոյն, և յամենայն ժամանակ կալոյ նոցա 'ի հարկաւորութիւն նոյն ջրոյն ըմպելոյ կացցէ պահակ 'ի վերայ ջրոյն ցայգ և ցերեկ զի մի 'ի թշնամեաց ապականեալ գոցի ջուրն։

ԳԼՈՒԽ ՅԼԱ.

'Ի ամենայն տեղի իջևանու բանակին թշնամեաց մերոց մի՛ իջցէ բանակն մեր անպատրաստ քանզի երբեմն կարի դաւաճանութիւն թշնամեաց թաղեալ վառհօդ տալ փնաս մեծ մեզ։

ԳԼՈՒԽ ՅԼԲ.

'Ի դաշտ բնակեալ բանակք մեր ուր որ իցէ վրան զօրագլխի անդ հաստատեալ կացցէ երկու դրօշակս որում աւուր և ժամու զի մի 'ի երկուս դրօշակի իջուցեալ երևեսցի, սա՛ իցէ նշան զի յայնմ գիշեր և կամ վաղիւն առաւօտու խաղալոցէ բանակս առ այլ, և իջուցեալ դրօշակն առաջագոյն խաղասցի և իջցէ 'ի տեղի որում սահմանեալ իցէ վաղիւն իջանելոյ բանակի անդ 'ի յոտս կանգնեալ հաստատեսցի դրօշակն և անդ կանգնեսցի վրան զօրագլխին, որպէս առաջնում, նոյն գունակ ամենայն ոք 'ի բանակէ առաքես-